

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հունաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով զարգացնել երկկողմ առևտրատնտեսական համագործակցությունը,

ձգտելով խրախուսել, զարգացնել և դյուրացնել զբոսաշրջությունը, ուղևորների և բեռների միջազգային փոխադրումները երկու երկրների միջև, ինչպես նաև տարանցիկ փոխադրումները միմյանց տարածքով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Գործունեության ոլորտը

Սույն Համաձայնագրի դրույթները կիրառվում են.

1. Պայմանավորվող կողմերի երկրների միջև ուղևորների և բեռների ավտոտրանսպորտային փոխադրումների և երկու երկրների տարածքներով տարանցիկ փոխադրումների նկատմամբ:

2. Վերոհիշյալ ավտոտրանսպորտային փոխադրումներ կատարելու համար դատարկ տրանսպորտային միջոցների ուղևորության նկատմամբ:

Հոդված 2

Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար.

1. «Փոխադրող» տերմինը նշանակում է Պայմանավորվող կողմերից մեկում հաստատված ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին, երկրներից յուրաքանչյուրում գործող օրենսդրության համաձայն, թույլատրված է կատարել ուղևորների և բեռների փոխադրումներ:

2. «Տրանսպորտային միջոց» տերմինը նշանակում է ավտոտրանսպորտային փոխադրամիջոց կամ փոխադրամիջոցների միացություն, որոնք գրանցված են Պայմանավորվող կողմերից մեկի

տարածքում, և որոնք կահավորված են և կօգտագործվեն միայն ուղևորների և բեռների փոխադրումների համար:

3. «Տարանցում» տերմինը նշանակում է Պայմանավորվող կողմերից մեկում գրանցված փոխադրողի կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքով ուղևորների և բեռների փոխադրում:

1. Ուղևորների փոխադրում

Ա. Նպատակը և սահմանումները Հոդված 3

Ուղևորներ փոխադրելու նպատակների համար սույն Համաձայնագիրը վերաբերում է.

1. Այն բոլոր ուղևորատար տրանսպորտային փոխադրումներին, որոնք ուղևորատար տրանսպորտային միջոցներով վարձու փոխադրումներ կկատարեն երկու Պայմանավորվող կողմերի միջև, ինչպես նաև տարանցիկ փոխադրումներ՝ միմյանց տարածքով:

2. Վերոհիշյալ ծառայությունների կատարման նպատակով դատարկ տրանսպորտային միջոցների ուղևորությամբ:

Հոդված 4

Ուղևորների փոխադրման նպատակով.

1. «Ուղևորատար տրանսպորտային միջոց» տերմինը նշանակում է փոխադրամիջոց, որը գրանցված է Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում, որը իր կառուցվածքով և հարմարվածությամբ նախատեսված է ուղևորներ փոխադրելու համար և ունի ոչ պակաս, քան 9 նստատեղ՝ ներառյալ վարորդինը:

2. «Կանոնավոր փոխադրումներ» տերմինը նշանակում է ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորների փոխադրում, նախօրոք համաձայնեցված հաճախականությամբ երթուղով, սակագներով և նախօրոք որոշված կանգառներով:

3. «Ճոճանակային փոխադրումներն» այն փոխադրումներն են, երբ ուղևորների որոշակի խումբը որոշակի ժամկետում Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող ժամանման վայր փոխադրվում է ժամանակավոր մնալու կամ տարանցիկ նրա տարածքով անցնելու համար:

Դուրս մեկնող ուղևորների ցանկացած խումբ պետք է վերադարձվի սկզբնական մեկնման երկիր:

ա) Ճոճանակային փոխադրումների ժամանակ ամբողջ ուղևորության ընթացքում ոչ մի ուղևոր չպետք է նստեցվի կամ իջեցվի:

բ) Առաջին երթի հետադարձ և վերջին երթի հիմնական ուղղությունը կատարվում է դատարկ տրանսպորտային միջոցներով:

գ) Կանոնավոր և ճոճանակային փոխադրումները և դրանց հետ կապված բոլոր հարցերը լուծվում են սույն Համաձայնագիրը ստորագրող իրավասու մարմինների փոխադարձ համաձայնության, ինչպես նաև 14-րդ հոդվածով ստեղծված Համատեղ հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների հիման վրա:

4. «Տարանցում» տերմինը նշանակում է ուղևորների փոխադրումներ, որոնք սկսվում են մի Պայմանավորվող կողմի տարածքից, որտեղ ավտոտրանսպորտային միջոցը գրանցված է, դեպի երրորդ երկիր, մյուս Պայմանավորվող կողմի տարածքով՝ պայմանով, որ ոչ մի ուղևոր չի նստեցվի կամ իջեցվի:

5. «Ոչ կանոնավոր փոխադրումներն են».

ա) դռնփակ փոխադրումները, այսինքն՝ նույն ուղևորների խմբի փոխադրումները նույն ավտոտրանսպորտային միջոցով, որը վերադառնում է այն երկիր, որտեղ գրանցված է,

բ) փոխադրումներ, որոնց ժամանակ երկրից դեպի դուրս ուղևորության ժամանակ տրանսպորտային միջոցը դատարկ չէ, իսկ հետադարձ ուղևորության ժամանակ դատարկ է,

գ) փոխադրումներ, որոնց ժամանակ երկրից դեպի դուրս ուղևորության ժամանակ տրանսպորտային միջոցը դատարկ է, իսկ հետադարձ ուղևորության ժամանակ դատարկ չէ,

դ) մյուս բոլոր փոխադրումները, որոնք չեն հակասում վերը նշված չափանիշներին:

Բ. Սուտք դեպի շուկա Հոդված 5

1. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նախատեսված ոչ կանոնավոր փոխադրումների համար այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ տրանսպորտային միջոցը գրանցված չէ, ոչ մի թույլտվություն չի պահանջվում:

2. Ոչ կանոնավոր փոխադրումները պետք է կատարվեն տրված գրանցման փաստաթղթերի հիման վրա:

3. Գրանցման փաստաթուղթը պետք է ներառի ուղևորության համար անհրաժեշտ ձևեր:

4. Ուղևորության փաստաթղթերի մեջ պետք է պարունակվեն հետևյալ տեղեկությունները.

- ա) փոխադրումների տեսակը,
- բ) երթուղին,
- գ) ներգրավված փոխադրողները,
- դ) ուղևորների լրիվ ցուցակը:

5. Ուղևորության փաստաթղթերը պետք է հաստատված լինեն այն Պայմանավորվող կողմի երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ տրանսպորտային միջոցը գրանցված է:

6. Ոչ կանոնավոր փոխադրումները, որոնք նշված են 4-րդ հոդվածի 5-րդ կետի «գ» և «դ» ենթակետերում, իրականացվում են համապատասխան արտոնագրի հիման վրա:

Արտոնագրերի քանակը որոշվում է երկու երկրների՝ Համաձայնագիրը ստորագրող իրավասու մարմինների կողմից՝ սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածով ստեղծված Համատեղ հանձնաժողովի նիստի ժամանակ:

Հոդված 6

1. Կանոնավոր և ճոճանակային փոխադրումները իրականացվում են թույլտվությունների հիման վրա:

2. Թույլտվությունները պետք է տրվեն փոխադրում կատարող տրանսպորտային կազմակերպության կողմից: Թույլտվությունները չի կարելի փոխանցել երրորդ կողմի կամ հանձնել ուրիշի: Համենայն դեպս, թույլտվություն ստացած փոխադրողը կարող է փոխադրումն իրականացնել ենթակապալառուի միջոցով:

3. Թույլտվությունների գործունեության ժամկետը պետք է լինի 3 տարուց ոչ ավելի՝ կանոնավոր փոխադրումների համար, իսկ ճոճանակային փոխադրումների համար՝ մինչև 1 տարի:

4. Թույլտվությունների մեջ պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

- ա) փոխադրումների տեսակը,
- բ) փոխադրումների երթուղին, ժամանման վայրը / որտեղից, դեպի ուր/,
- գ) մինչև երբ է ուժի մեջ թույլտվությունը,
- դ) կանոնավոր փոխադրումների կանգառները, չվացուցակը:

5. Խնդրագրերը թույլտվությունների համար ներկայացվում են Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններին, որտեղ տրանսպորտային միջոցը գրանցված է, որը կարող է ընդունել կամ մերժել այն:

Այն դեպքում, եթե առարկություն չկա ներկայացված խնդրագրի համար, վերոհիշյալ իրավասու մարմինները հաղորդակցվում են մյուս

Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների հետ: Եթե վերջինս համաձայնում է, ապա երկու Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները թողարկում են թույլտվություններ այն երթուղու համար, որը գտնվում է իրենց տարածքներում:

6. Խնդրագրերի մեջ, որոնք պետք է լինեն 2 օրինակից, բացի այն բոլոր տվյալներից, որոնք պահանջվում են պետական օրենսդրության կողմից, պետք է նաև նշված լինի երթուղու պլանը, որտեղ հստակ նշված կլինեն ավտոբուսային կանգառները և կիլոմետրերը:

Անհրաժեշտության դեպքում պատասխանատու մարմիններին թույլ է տրվում խնդրել՝ փոխադրողներից ներկայացնել բոլոր հարկավոր տեղեկությունները:

7. Ուղևորության ժամանակ թույլտվության օրինական պատճենը կամ բնագիրը պետք է լինի տրանսպորտային միջոցի մեջ:

8. Թույլտվությունները պետք է համապատասխանեն սույն Համաձայնագրում նշված ձևին:

Հոդված 7

Ոչ կանոնավոր տարանցիկ փոխադրումների ժամանակ, երբ տրանսպորտային միջոցը գրանցված է մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, թույլտվություն չի պահանջվում:

Հոդված 8

Կանոնավոր փոխադրումները կարելի է սկսել իրագործել այն ժամանակ, երբ Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները փոխանցել են միմյանց հատուկ թույլտվություն բոլոր անհրաժեշտ ձևակերպումներով:

Հոդված 9

Ամեն տարի՝ մինչև հունվարի վերջը, բոլոր այն ծառայությունները, որոնք իրականացնում են կանոնավոր փոխադրումներ, իրենց երկրի իրավասու մարմիններին պետք է ուղարկեն հետևյալ տեղեկությունները.

ա) կիլոմետրերի և ուղևորությունների քանակը,

բ) նախորդ տարվա ուղևորների թիվը:

Վերոհիշյալ տեղեկությունները փոխանակվում են Պայմանավորվող կողմերի միջև:

2. Բեռների փոխադրում

Հոդված 10

1. Սույն Համաձայնագրի հիման վրա՝ Պայմանավորվող կողմերի փոխադրողները իրավունք ունեն իրագործելու բեռների փոխադրումներ Պայմանավորվող կողմերի երկրների միջև /երկկողմ փոխադրումներ/, ինչպես նաև տարանցիկ բեռնափոխադրումներ՝ երկու երկրների տարածքներով:

Երկու երկրների բեռնափոխադրողները պետք է ունենան թույլտվություններ՝ տրված Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից:

2. Համաձայն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ սահմանափակումներ չպետք է լինեն թույլտվությունների քանակի վերաբերյալ:

3. Հատուկ թույլտվություններ պետք է տրվեն տարանցիկ փոխադրումների համար, որոնց մեջ պետք է նշվի, թե որ երկրից դեպի որ երկիր է բեռնափոխադրումներ կատարվում: Այդ հատուկ թույլտվությունները կարող են օգտագործվել միայն այն փոխադրողների կողմից, որոնց անունով նրանք տրվել են, և ենթակա չեն փոխանցման: Այդպիսի թույլտվություններ տալու հնարավորության, ինչպես նաև նրանց քանակի մասին հարցը որոշվում է Համատեղ հանձնաժողովի կողմից, ինչպես նշված է սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածում:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածում նշված թույլտվության ձևը որոշվում է Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից, Համատեղ հանձնաժողովի ընդունած որոշումների հիման վրա՝ համաձայն սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները ամեն տարի պետք է միմյանց փոխանցեն պահանջված թույլտվությունները՝ 14-րդ հոդվածում նշված Համատեղ հանձնաժողովի որոշած կարգով:

Սույն Համաձայնագրի իրագործման սկզբնական ժամանակաշրջանում, այսինքն՝ Համատեղ հանձնաժողովի առաջին ժողովից առաջ, երկու Պայմանավորվող կողմերը համաձայնում են կատարել երկկողմ և տարանցիկ բեռնափոխադրումներին վերաբերող

բոլոր պահանջները, որոնք դիվանագիտական ուղիներով կհաղորդվեն համապատասխան իրավասու մարմիններին:

Հոդված 13

Բացառությամբ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների, հատուկ թույլտվություններ չեն պահանջվում հետևյալ դեպքերում.

1. բեռների փոխադրումներ օդանավակայանից կամ դեպի օդանավակայան դժբախտ պատահարների դեպքում, եթե ինքնաթիռը վթարի է ենթարկվել կամ թռիչքը չեղյալ է հայտարարվել,
2. խափանված ավտոտրանսպորտային միջոցների,
3. մահացածների աճյունների,
4. այլ բնակավայր տեղափոխվելիս անձնական իրերի փոխադրումների,
5. փոստի,
6. ցուցահանդեսային բեռների,
7. մշակութային միջոցառումների, կրկեսային, կինոփառատոների, ռադիոներկայացումների և հեռուստատեսային ներկայացումների համար նախատեսված իրերի և պիտույքների,
8. կենդանիների դիակների, բացի այն դեպքերից, երբ դա իրենից ներկայացնում է արտադրական հումք,
9. մեղուների և ձկների սերունդների,
10. ծաղիկների և դեկորատիվ բույսերի,
11. բժշկական օգնության համար փոխադրումների,
12. դատարկ տրանսպորտային միջոցների տեղափոխման դեպքում, որոնք պետք է փոխարինեն խափանված տրանսպորտային միջոցներին,
13. երբ տրանսպորտային միջոցը պատկանում է փոխադրողներին, իսկ կցորդը արտասահմանյան արտադրանք է,
14. տրանսպորտային միջոցների, որոնք նախատեսված են տեխնիկական օգնություն ցուցաբերելու համար,
15. խափանված տրանսպորտային միջոցը փոխարինելու համար մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող այլ տրանսպորտային միջոցին,
16. բեռների, որոնք նախատեսված են կրթության և գովազդի համար,
17. տրանսպորտային միջոցներով բեռների փոխադրումների ժամանակ թույլատրելի քաշը /ներառյալ կցորդի քաշը/ չպետք է լինի 6 տոննայից ավելի կամ, թույլատրելի օգտակար բեռնվածությունը /ներառյալ կցորդինը/ չպետք է գերազանցի 3,5 տոննան:

Սույն հոդվածում նշված փոխադրումների դեպքում վարորդը պետք է ունենա փոխադրման մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կհաստատեն, որ տվյալ դեպքը համապատասխանում է փոխադրման նշված ձևերին:

3. Ընդհանուր դրույթներ Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթների իրագործման հետ կապված հարցերի քննարկման նպատակով ստեղծվում է Համատեղ հանձնաժողով:

Հանձնաժողովը պետք է բաղկացած լինի Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից, որոնք իրենց ժողովներին կարող են հրավիրել ավտոտրանսպորտային ձեռնարկությունների ներկայացուցիչներին:

Համատեղ հանձնաժողովի նիստերը պետք է հրավիրվեն տարին մեկ անգամ, կամ էլ անհրաժեշտության դեպքում նիստը պետք է հրավիրվի մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով: Օրակարգը ներկայացնում է հյուրընկալող Պայմանավորվող կողմը, որի խնդրանքով հրավիրվել է նիստը, որին պետք է նախօրոք /առնվազն 2 շաբաթվա ընթացքում/ նախապատրաստվել: Ամեն մի նիստի ժամանակ Պայմանավորվող կողմերի պատվիրակությունների ղեկավարության կողմից պետք է ընդունվի և ստորագրվի արձանագրություն:

Համատեղ հանձնաժողովը որոշում է նաև սահմանափակման, տեղեկությունների փոխանակման և մյուս համապատասխան հարցերը:

Հոդված 15

Պայմանավորվող կողմերը միմյանց տեղեկացնում են, որ սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու իրավասու մարմիններ են հանդիսանում.

Հայաստանի Հանրապետությունում՝ տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը,

Հունաստանի Հանրապետությունում՝ տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը:

Հոդված 16

Պայմանավորվող կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ տրանսպորտային միջոցները, որոնք գրանցված են համապատասխան Պայմանավորվող կողմի տարածքում, օգտվելով

մինչանց համապատասխան ճանապարհային ցանցերից, ազատվում են բոլոր հարկերից և այլ պարտականություններից, ինչպես նաև մյուս հնարավոր ծախսերից:

Հոդված 17

Մի Պայմանավորվող կողմի փոխադրողները և նրանց տրանսպորտային միջոցների անձնակազմերը, գտնվելով մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, պարտավոր են չխախտել այդ երկրի օրենքները և կանոնները:

Հոդված 18

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ներպետական անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին ծանուցումների փոխանակման օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողության ժամկետը 1 տարի է: Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ չտեղեկացնի մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին, ապա Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի ևս 1 տարով և այդպես շարունակ:

Կատարված է Աթենք քաղաքում 1996 թվականի հունիսի 18-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, հունարեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մեկնաբանման տարածայնության դեպքում հիմք է ընդունվում անգլերեն տեքստը:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, համապատասխան ձևով լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, ստորագրում են սույն Համաձայնագիրը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հունիսի 9-ից: